

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԴԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԱՐԴԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ *

ՇՈՒՇԱՆ ԱՍԿԱՐՅԱՆ

ԱրԴԻ հայ գրականության և լրագրության ամբիոն

Աշխարհի յուրաքանչյուր ազգի մշակույթ տարբերվում է վառ արտահայտված, միայն իրեն հատուկ մշակութային ինքնությամբ: Մշակույթը կարելի է ուսումնասիրել՝ հենվելով տվյալ ազգի պատմական-հասարակական զարգացման դինամիկայի վրա: Հայտնի փաստ է, որ մշակույթը միավորող հատկանիշներ ունի այն դեպքում, երբ այդ մշակույթի կրողները հավատարիմ են ազգային-մշակութային արժեքներին: Իսկ վերոնշյալ գործընթացը մեր օրերում ցայտուն կերպով արտահայտված է պարբերական մամուլում: Այսօր ԼՂ Հանրապետության համար, որտեղ երկար ժամանակ ինտերնացիոնալիզմի քողի տակ իրականացվում էր ադրբեջանական մշակույթի քարոզում, ետպատերազմյան տարիներին արցախյան թերթերի տեսադաշտում էին գտնվում ազգային մշակութային ինքնության պահպանման ու հոգևոր անվտանգության հիմնահարցերը: Մշակութային ինքնությունը ազգի պատմության և հոգևոր-մշակութային ձևավորվածության դրսևորույթ է, որը նպատակ ունի պահպանելու և պաշտպանելու ազգային մշակութային արժեքները: Այն զուտ «պաշտպանիչ շերտ» չէ, այն տվյալ ազգի անընդհատ փոփոխվող և համապատասխանաբար գնահատվող կենսակերպ է, որը նպատակաուղղված է դեպի ապագան: Մշակութային ինքնության էությունն այն է, որ կրողը գիտակցի իր մշակույթի առանձնահատկությունները, այն գնահատի պատմության համապատկերում և համեմատական եզրեր տանելով այլազգի մշակույթների հետ՝ արժևորեն այն, հասկանան նրա ամբողջական տարբերությունները գլոբալիզացիայի և մշակույթի զանգվածային ունիֆիկացիայի պայմաններում: Պետք է ընդգծել, որ Արցախի մշակութային ինքնությունը ձևավորվել ու զարգացման ճանապարհն անցել է օտար ազգի տիրապետության օրոք: Այն մշակութային յուրահատուկ կամուրջ էր բազմազգ տարածաշրջանի համար:

Արցախյան մշակութային –տեղեկատվական դաշտն իրենից ներկայացնում է պատմական և արդի ժամանակաշրջանների արցախյան մշակութային կյանքի, ազգային մշակութային արժեհամակարգերի մեծ համալիր և տեղեկատվադաշտ:

Այսպես կոչված արևմտյան ներազդեցությունների հետևանքով նոր սերնդի մեջ «տեղավորվեցին» իրենց օրապահանջ բովանդակությամբ օտարածին երևույթներ և դա դարձավ կենսաձև, մինչդեռ ազգային մշակութային ժառանգությունն «ապահովող» սերունդը ազգային ինքնագիտակցության ապահովման համար սկսեց ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիներ փնտրել: Կարծում ենք՝ տեղեկատվական դաշտն այս առումով ևս նպաստում է /հեռուստատեսու-

* Հոդվածն ընդունվել է 15.02.2013:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրԴԻ հայ գրականության և լրագրության ամբիոնը:

թյուն, համացանց սոցիալական ցանց/, որ սերունդների մեջ դեռևս չորոշակիացված են համարվում ազգային մշակութային նախասիրությունները: Ազգային ժառանգության կենսունակության պահպանման համար իր լուրջ դերակատարությունը պետք է ունենա մամուլը:

Ղարաբաղյան հակամարտության քաղաքական պատմության հիմքում ընկած է արցախահայության ինքնության պահպանման հիմնախնդիրը: Եթե աղբյուրական կառավարության օրոք սպիտակ ջարդ էր տեղի ունենում, ապա 21-րդ դարի շենին Արցախը կանգնել էր մշակութային գլոբալիզացիայի հիմնախնդրի առջև:

Փորձենք յուրովի բացահայտել, թե մամուլն ինչ ազդեցություն է ունենում մշակութային ինքնության պահպանման, փոխանցման ու քարոզչության գործում: Այստեղ «քարոզչություն» հասկացության կիրառումը բացատրում ենք ազգային դիմագծի և ինքնության քարոզչության համատեքստում: Ընդհանուր առմամբ տեղեկատվության արդի միջոցները վեր են ածվել քարոզչության հզոր միջոցների և նման քարոզչատեղեկատվական գործելակերպ ունի նաև արցախյան արդի մամուլը:

ԼՂՀ մամուլի օրգանների հրապարակումների ուսումնասիրություններն ի ցույց են դնում, որ տպագիր մամուլում զգալի աշխատանքներ են տարվում ոչ միայն հոգևոր զարթոնքի, այլև մշակույթի ու ազգային տեղեկատվական դիմագծի պահպանման առումով: Մեր ուսումնասիրությունները պարզում են, որ ազգային ավանդույթների ու մշակույթի պահպանումն առավել ընդգծված ձևով դրսևորվել է հատկապես «Ազատ Արցախ», «Լուսարար» և «Ստեփանակերտ» թերթերում: «Լուսարարի» «Գանձարան» խորագրի տակ տեղադրված նյութերը մայրենիի անադարտությունը պահպանելու, լեզվական մեղանջումներից խուսափելու յուրատիպ քարոզ է: «Մեր ոսկեղենիկը», «Մեր լեզուն մեր զենքն է», «Մեսրոպաշունչ հայոց լեզուն», «Միշտ բորբ պահենք մայրենիի հուրը» նյութերը մայրենիի պահպանմանն ուղղված յուրատեսակ կոչեր են: Ավելին՝ թերթի «լեզվագիտական» խորագիրը ևս յուրատիպ մշակութային ինքնության քարոզչություն է կատարում, քանի որ ընթերցողին մատուցում է Արցախի բարբառին առնչվող նյութերը, որոնք շարունակական բնույթ են կրում: Արցախյան պարբերականների աշխատառժում առանձնահատուկ տեղ ունի ազգային ինքնագիտակցության ձևավորմանը նպատակաուղղված գործունեությունը՝ ազգային մշակութային արժեքների ներկայացում և քարոզում, մշակույթի պատմության տեսաքննություն:

Դեռևս նախորդ դարի վերջերին արցախյան մամուլը, անդրադառնալով մարաբաղաբի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանում ազգային երաժշտության և նվագարանների ուսուցանման անհրաժեշտությանը, գրել էր. «Շատ քիչ են ժողովրդական բաժիններում, հատկապես թառ, քամանչա, սովորողները»: [1] Եվ շարունակել. «Մենք պետք է անպայման մեր դպրոցներում համապատասխան բազա ստեղծենք, որ չմոռացվեն այնպիսի ժողովրդական նվագարաններ, ինչպիսիք թառն է, քամանչան»: [2]

Ազգային մշակույթի պահպանումը յուրատիպ ձևով է արտահայտված Ստեփանակերտի քաղաքապետարանի «Ստեփանակերտ» քաղաքային թերթում:

Պետք է ասել, որ «Ստեփանակերտ» պաշտոնաթերթում ավանդույթներին ու մշակույթին նվիրված նյութերը մատուցվում են հիմնականում «լուրի» ժանրում:

«Վանա Ծովուն արշալույսը» ֆիլմի՝ Ստեփանակերտում կայացած առաջնախաղի մասին է պատմում «Վանա Ծովուն արշալույսը Ստեփանակերտում» հոդվածը, որում հեղինակը բարձրացնում է հրատապ ու ցավոտ թեմա. «Արդյո՞ք, Թուրքիայում դարասկզբին կատարված ցեղասպանությունից փրկված հայի զավակը, թող պատրաստ է ոճրագործի մարդկային դատի հասցնելու պատրաստականությունը»: Դրսում համաշխարհայնացումն է տիրում, հարյուր տարի է անցել, ինչ ցեղասպանության մասին է խոսքը, բացականջում է հերոսի թող, ասել է թե՛ նրա շուրթերով՝ երիտասարդ հայ ժամանակակիցը: Արդյո՞ք համաշխարհայնացմանն ի գորու է դիմանալ, հաղթահարել հայի հիշողությունը: Թե՛ ևս մի քանի տարի, և ահավոր այդ ոճրագործության մասին անգամ հայ մարդը չի հիշի: Հարցեր՝ հրատապ, ցավոտ, որոնց փորձում են պատասխանել ֆիլմի հեղինակները:

Հոդվածը ընթերցողի մոտ բորբոքում է պահանջատիրության զգացում և հորդորում երիտասարդ սերնդին հետամուտ լինել ցեղասպանության ճանաչմանը: «Տիգրան Սեծից միայն անունդ է մնացել քո մեջ,- ցավով ասում է Կարապետ պապը որդուն, բայց և մտքում մի հույս փայփայում, որ դա լույս այդպես չէ, և որ կգա այն օրը, որ իր՝ կարծես ջրաղացների հետ պայքար հիշեցնող մենամարտը կշարունակի ապահով կյանքով ապրող իր զավակը, թող, որ գոնե նրանց կհաջողվի տեսնել սրբազան երկիրը, ետ վերադարձնել ու տեղ կանգնել պապենական հողին»:[3]

Արցախյան թերթերն ուշի ուշով հետևում են նաև սփյուռքի մշակութային կյանքի հայության ինքնության պահպանմանը միտված կարևոր իրադարձություններին: 2011 թ. նոյեմբերի 30-ի համարում կարդում ենք Սվետլանա Խաչատրյանի հոդվածը, որը Փարիզում լույս տեսած Արցախի պատմության և մշակույթի մասին աշխատությանն է վերաբերում: [4] Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության 20-ամյակի առթիվ ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության հովանու ներքո և Ֆրանսիայում գործող «Սատար Լեռնային Ղարաբաղին» կազմակերպության աջակցությամբ Փարիզում լույս է տեսել «Արցախ՝ հայ ավանդույթների և արվեստի պարտեզ» ֆրանսերեն և անգլերեն նկարազարդ աշխատությունը: Գիրքն ընթերցողին բացառիկ հնարավորություն է ընձեռում ծանոթանալու Արցախի պատմությանը, հնագիտական ժառանգությանը, պատմաճարտարապետական հուշարձաններին, յուրատիպ գույներով հագեցած ձեռագիր-մատյաններին, գորգագործության արվեստի դպրոցին: Գրքի հեղինակային կազմում են հանրահայտ գիտնականներ և դասախոսներ, որոնք Արցախի պատմության և մշակույթի գիտակներ են:

Ժամանակակից մշակույթին հատուկ է իրարամերժ երկու բարդ գործընթացների միտումը՝ համաշխարհային քաղաքակրթության գործընթացի գլոբալիզացում և ազգային մշակութային ինքնության պահպանում: Ազգային ինքնության պահպանմանը խոչընդոտող երևույթը գլոբալիզացիան է, որը խուճապահար է արել աշխարհի շատ երկրների ժողովուրդների: Մի կողմից՝ այն հանգեցնում է ազգային մշակութային դիմագծի վերացման, այդ իսկ պատճառով տարեցտարի

ավելի մեծ կարևորություն է ստանում ազգային և մշակութային ինքնության պահպանման հարցը: Մյուս կողմից էլ՝ կարելի է հանգել այն մտքին, որ գլոբալիզացիայի շնորհիվ ազգային մշակույթը դուրս է հանվում նեղ էթնոսային շրջանակներից և մատչելի դառնում երկրագնդի ողջ բնակչությանը: Սակայն հարց է ծագում՝ արդյոք գլոբալիզացիայի շնորհիվ նեղ էթնոսային սահմաններից դուրս բերված և աշխարհին ներկայացված մշակույթն ազգային մշակույթի համատեքստում է հանդես գալիս: Սա վիճարկելի է, քանի որ գլոբալիզացիայի մշակած մշակութային քաղաքականությունը տեսնում է մեկ ընդհանուր մշակույթ, որտեղ չկան ազգային պատկանելություն և դիմագծեր, այսինքն՝ այստեղ ավելորդ է խոսել ազգային մշակույթ ներկայացնելու մասին:

Մամուլից պարզ է դառնում, որ այսօր մշակույթի ոլորտի հիմնական նպատակը միացյալ մշակութային-տեղեկատվական ոլորտում մշակույթի պահպանումն ու հետագա զարգացումն է: Հանրապետության մշակութային կյանքը ակտիվ է և «արժանի է», որ տպագիր և էլեկտրոնային ՁԼՄ-ները հավուր պատշաճի ուշադրության արժանացնեն:

Մշակութային գլոբալիզացիան այսօր թույլ չի տալիս, որ փակ տարածք մնա: Արդի փուլում մշակույթի գլոբալիզացման հիմնախնդիրը գտնվում է ոչ միայն հայ, այնպես էլ օտարազգի գիտնականների և հետազոտողների ուշադրության կենտրոնում: Սակայն, ցավոք գլոբալիզացիայի վերաբերյալ գրականության մեծ մասը վերաբերում է գլոբալիզացիայի, գլոբալիզացիայի գիտության, ժամանակակից տնտեսական, քաղաքական և համակարգչային գործընթացներին: Մշակութային ոլորտի գլոբալիզացման գործընթացների վերաբերյալ սակավադեպ ուսումնասիրությունների էք հանդիպում: Իսկ ինչ վերաբերում է մշակույթի գլոբալիզացման հիմնախնդրին և նրա արցախյան մոդելի առանձնահատկություններին, ապա հատուկ ուսումնասիրություններ, որոնք կներառեն այս գործընթացների ողջ բազմակողմանիությունը և իրարամերժությունը, և այդ գործընթացը կդիտարկեն լրագրության մշակութային դիտակետից, հայկական իրականության մեջ չէք հանդիպել:

Այսօր մեծ տեղ է հատկացնում ազգային ինքնության հիմնախնդիրների լուսաբանմանը: Եվ ամենակարևորը՝ լուսաբանվող նյութերը սոսկ երևույթի մակերեսային դիտարկումներ չեն, այլև սուր քննադատության պրիզմայով ներկայացված են ազգային ինքնությանը հակասող իրողությունները: Տպագրվում են սահազանգող և ճշան խորագրերով նյութեր, որոնք քարոզում են ազգային մշակութային ինքնության եզիակիության գաղափար:

Նյութերի ժանրային բազմազանությունը ընթերցողներին թույլ է տալիս հեռու մնալ միատարրությունից, քանի որ ծանծրալի «հաշվետվություններն» այլևս հեռու են հետաքրքիր և գրավիչ լրագրողական նյութ լինելուց: Հարկ է նշել, որ առավել հաջողված են հարցազրույցի ժանրով ներկայացված նյութերը, որ պայմանավորված է մշակույթի գործիչների և ոլորտի պաշտոնյա այրերի հետ ծավալված հետաքրքիր հարցուպատասխանի առկայությամբ:

Պատասխանելով «Ազատ Արցախ» թերթի հարցերին՝ ԼՂԴ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Ա. Սարգսյանը ազգային մշակույթի զարգացմանը ռազմավարությունը տեսնում էր միասնական մշակութա-

յին դաշտի՝ համահայկական մշակութային դաշտի ստեղծման մեջ. «Քարոզելով միասնական մշակույթի սկզբունքը՝ մենք պայքարում ենք այն բանի համար, որ պետությունը ֆինանսավորի նախ և առաջ ազգային մշակույթի զարգացումը: Մանավանդ, շուկայական պայմաններում այն հատկապես պետական աջակցության կարիքն ունի: Միասնական մշակույթի դրույթը պետք է հասկանալ հենց այս տեսանկյունից: Կոստոպոլիտիզմով ազգային մշակույթ չես ստեղծի»: Նախարարը խորհուրդ է տալիս դիտարկել աշխարհի ցանկացած պետության օրինակ և հարց է ուղղում՝ «նրանցից ո՞ր մեկն է ուրիշ ազգի մշակույթի զարգացման համար միջոցներ ծախսում»:[5]

Ազգային մշակույթի պահպանման ռազմավարության մեջ էր մտնում նաև ոլորտի մասնագետների հետ սերտ համագործակցությունը, որը նպատակ ուներ ոչ միայն հաղորդակցության, այլ նաև մրցունակության մթնոլորտ ստեղծելու: Իսկ կադրային հարցի արդյունավետ լուծումը նախարար Ա. Սարգսյանը տեսնում էր այս լուսի տակ. արցախցի շնորհալի երեխաներին ուղարկել Հայաստան՝ սովորելու, Հայաստանի ստեղծագործական ուժերը մեր ուժերի հետ համագործակցորեն ներգրավելու, միաժամանակ ստեղծելով և՛ համագործակցության, և՛ մրցակցության մթնոլորտ: Նման մեխանիզմը նպատակ էր հետապնդում մշակույթի զարգացումը դուրս հանելու անհատի իշխանությունից, որով էլ կպայմանավորվի ազգային մշակույթի հաջող զարգացման անկախ գործընթացը:

Հետպատերազմյան շրջանի արցախյան պարբերականները արձագանքել են նաև հոգևոր մեկ այլ վտանգի՝ գլոբալացմանը: «Օրեցօր սաստկացող գլոբալացման պրոցեսները կատարում են իրենց սև գործը ազգային արժեքների ու ծագման գործում»: [6] Անդրադառնալով ազգային երգի ու պարի անադարտության հարցին՝ թերթը գրում է. «Իր ժամանակին, թեկուզ կոմունիստական մենատիրության պայմաններում, զգալի զարգացում և ծաղկում էին ապրում հայ ազգային երգն ու պարը, գործում էին զգալի թվով պետական համույթներ, որոնք ողջ աշխարհում բարձր էին պահում հայ երգի ու պարի հարզը՝ ցուցադրելով այն աշխարհի բազում բեմերում: Բարձրարվեստ այդ կատարումները բազմիցս արժանացել են ամենապատվավոր մրցանակների և համընդհանուր ճանաչման՝ տարածելով հայ ազգային երգն ու պարը աշխարհի տարբեր ծագերում»: Եվ հակադրելով ներկա իրավիճակը՝ հեղինակը ցավով ասում է. «Այսօրվա մեր մոր սերդին հեռուստատեսությամբ, ռադիոյով, ձայներիզներով և տեսաֆիլմերով ամեն օր հրանցվում է մի այնպիսի հայկական երգ ու պար, որը լոկ անվանումով է հայկական»: Ժամանակի փորձության բովով անցած մշակութային արժեքներն այլափոխելը, անճանաչելորեն ձևախեղելը և էազրկելը մեղք համարելով՝ փորձ է կատարվում ընթերցող զանգվածին ևս մեկ անգամ հիշեցնել մեր ազգի մեծերին. «Հիշենք, որ Մեծն Կոմիտասը գրի է առել երեք հազար հայկական երգ, և կարելի է պատկերացնել, թե ինչ անեզր զանձարան է պարունակում ճշմարիտ հայ երգը, որն ուրանում ենք այդպես հեշտորեն և անմտորեն»:[7]

Մամուլի էջերից արցախցի արվեստագետները անդրադառնում են նաև համաաշխարհայնացման՝ մշակույթի առանձին ոլորտներ, օրինակ՝ կերպարվեստ մուտք գործելու մասին. «Մեր հայացքը բևեռելով դեպի Եվրոպա, չպետք է նմա-

նակենք նրա ամեն մի քայլը: Անցած դարի 20-ից 40-ական թվականներին կերպարվեստ են թափանցել տարբեր ուղղություններ, այսպես ասած՝ «իզմ»-եր, սակայն դրանց շատ կարճ կյանք էր վիճակվել: Ժամանակ առ ժամանակ դրանք ներթափանցել են մեր միջավայրը, բայց այդ հոսանքները մնայուն են եղել»: Եվ վերջում գալիս են այն մտահանգման, որ «ճիշտն այն է, երբ հենվում են ազգային արժեքների վրա»:[8]

«Հայկական աշխարհը արևելքից և արևմուտքից, հյուսիսից և հարավից փորձում են գրավել մտավոր և մշակութային գրոհները»:[9] Հարց է առաջանում, արդյոք հայերիս հինավուրց մշակույթի ինքնուրույն ոգին կկարողանա՞ պահպանվել այդ պայքարում:

Մշակութային գլոբալիզացիայի դրական կողմերը մատնանշելով՝ արցախյան մամուլում հանդիպում ենք նաև վերջինիս ինտեգրվելու, ասել է թե՛ ազգային նեղ շրջանակներից դուրս գալու փորձերի: ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Լեռնիկ Հակոբյանը առաջ էր քաշում «մշակութային խմբերն Արցախից դուրս ներկայացնելու» խնդրահարույց միտքը. իրականում մեկուսացված վիճակ է և «այն տպավորությունն է, թե արցախյան համայնքները միայն տոն օրերին համերգներով զվարճացնելու համար են»:[10] Եվ մեր հաջողությունն է համարում այն փաստը, որ, այնուամենայնիվ, չնայած ստեղծված բարդ կացությանը, որոշ համայնքներ, հնարավորության դեպքում հանդես գալով արտերկրում կազմակերպվող փառատոններին, անպայման մրցանակով շահած են վերադառնում:

Եզրահանգելով՝ նշենք, որ տեղական մամուլը գործում է «ազգային մշակութային հետաքրքրությունների» շրջանակում և առաջնահերթությունը տալիս է ազգային մշակութային արժեքների լուսաբանմանն ու քարոզմանը: Արցախյան պարբերականները իրագործում են իրենց առաքելությունը՝ ազգային մշակույթի ինքնության քարոզման և տարածման գործում: Արցախյան մամուլում մշակութային ինքնաներկայացումը կատարվում է շատ գրագետ մոտեցմամբ, իսկ ազգային տեղեկատվական դիմագիծը գաղափարական դաշտ է տեղափոխում ինքնահաստատման ճանապարհը հարթող ԼՂ Հանրապետության համար:

Բարեբախտաբար նոր ժամանակներում Արցախը դադարել է փակ տեղեկատվական հասարակություն հանդիսանալուց: Սակայն անժխտելի է, որ արցախյան լրատվադաշտը դեռևս կարիք ունի նոր մշակութային-տեղեկատվական ռազմավարության մշակման, որը կօգնի նորօրյա քաղաքական օրակարգում ամբողջ հայության առջև ծառայած կարևորագույն խնդիրներից մեկի՝ Արցախյան հիմնախնդիրի հայանպաստ լուծման բանալին ունենալու:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սողոմոնյան Ս., Սեր գլխավոր երաժշտանոցի հոգսերը, ԼՂ Հանրապետություն, 26 մայիսի 1995, N 83 (114):
2. Նույն տեղում:

3. «Ստեփանակերտ» 2011 թիվ, մայիսի 31, էջ 19-20 /525-526/:
4. «Ազատ Արցախ», 30.11.2011:
5. Բալայան Ս., Ազգային մշակույթի զարգացման ռազմավարությունը, «Ազատ Արցախ», 23 մայիսի 2000, N62 (970), էջ 6:
6. Երնջակյան Գ., Ճշմարիտ ազգային արժեքներ, «Ազատ Արցախ», 12 հոկտեմբերի, 2002, N120 (1334), էջ 6:
7. Նույն տեղում:
8. Հովհաննիսյան Ն., Արվեստագետին կարող է զայթակղել անգամ օրվա աննշան թվացող գեղեցիկ պահը, «Ակունք», 6 մարտի 2007, էջ 11:
9. Բալայան Ս., Մշակույթ. տարվա արդյունքները սպասելիքների կտրվածքում, «Ազատ Արցախ», 31 դեկտեմբերի 2002, էջ 4, N153 (1367):
10. Գաբրիելյան Կ., Մշակույթն Արցախի դեսպանն է արտերկրում, «Լուսարար» 23-24 (185-186), 30 դեկտեմբերի 2008, էջ 10:

РЕЗЮМЕ

Проблемы сохранения культурной идентичности в современной арцахской прессе

Аскарян Шушан

В статье рассматривается роль сохранения культурной идентичности в современной арцахской прессе. Автор приходит к выводу, что несмотря на угрозы культурной глобализации, местные газеты действуют в интересах национально-культурной сферы. Однако, бесспорно, что информационное поле в НКР все еще нуждается в новой культурно-информационной стратегии.

SUMMARY

The issue of maintaining the cultural identity in the modern periodicals of Artsakh Shushan Askaryan

The article deals with the role of preserving cultural identity in the modern periodicals of Artsakh. The author comes to the conclusion that despite the threat of cultural globalization, local newspapers are in the interests of national and cultural sphere. There is no doubt that the NKR information field still needs a new cultural and informational strategy.